ԿԱՐԾԻՔ

Վիրաբ Ալբերտի Վարդանյանի «Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք» - (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Վիրաբ Ալբերտի Վարդանյանի՝ «Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է իրավական կարևոր սկզբունքների՝ մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի սահմանադրականացման հիմնախնդիրների հետազոտությանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը չի հարուցում որևէ կասկած՝ հատկապես Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

Հարկ է նկատել, որ հեղինակին հաջողվել է համոզիչ փաստարկներով հիմնավորել ընտրված թեմայի արդիականությունը և դրան առնչվող առանձին հիմնահարցերի հետազոտության կարևորությունն ու հրատապությունը: Բայևայնպես, կարծում ենք, հեղինակի դատողություններն առավել համոզիչ կլինեին, եթե ընտրված հարցադրումների հիմքում դրվեին քննարկվող իրավական սկզբունքների ապահովման երաշխավորման առավել հուսալի կառուցակարգեր ներդնելու անհրաժեշտության հետ կապված հիմնահարցեր:

Բացի այդ, գտնում ենք, որ ատենախոսության նյութի շարադրանքի և, հատկապես, պաշտպանության ներկայացվող դրույթների համակարգված ներկայացմանը մեծ չափով նպաստել է ատենախոսության կառուցվածքը: մասնավորապես հեղինակը հարցերն ընտրել է այնպիսի տրամաբանական հերթականությամբ, ինչը հնարավորություն է տվել քննարկելու, նախ, թեմայի ուսումնասիրության ամբողջականությանն ուղղված ելակետային նշանակություն

ունեցող հարցադրումները, ապա, անցնելու ատենախոսության թեմայի բուն էության վերաբերյալ կոնկրետ հիմնահարցերի, դատողությունների, եզրահանգումների ու ամփոփումների և, արդեն իսկ ներկայացված նյութի հիման վրա, շարադրելու ատենախոսության բոլոր հիմնադրույթները՝ ըստ տրամաբանական շղթայի: Մասնավորապես, հետազոտությունն սկսվել է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների հիմնական տարրեր հանդիսացող «մեղք» և «պատիժ» հասկացությունների պատմաիրավական վերլուծությունից, այնուհետև անցում է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման նախադրյալների, դրանց սահմանադրաիրավական բովանդակության, իրավունքի տարբեր ճյուղերում դրանց ինտերպրետացիայի ու իրավաընկալման և այլ հարցադրումների հետազոտությանը: Իսկ եզրափակիչ գլխում անդրադարձ է կատարել մեղքի սկզբունքին և պատժի համաչափության սկզբունքին առնչվող միջազգային փորձին և եվրոպական իրավական չափորոշիչների վեր հանմանը:

Պաշտպանության ներկայացված եզրահանգումների և դրանց հիմնավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է համակարգված տեսքով ներկայացնել իր իսկ կողմից առաջադրված հարցերին առնչվող դատողությունները: Արժեքավոր են հեղինակի՝ հատկապես, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 71-րդ հոդվածի առնչությամբ մեկնաբանությունները, ինչպես նաև որոշ կառուցակարգային վերափոխումներ իրականացնելու անհրաժեշտության հիմնավորումները:

Անշուշտ, աշխատանքում արծարծված առանձին հարցադրումների իրավական արժեքի, դրանց առնչությամբ ներկայացված եզրահանգումների հետ կարելի է և չհամաձայնվել, սակայն կարևոր է ընդգծել, որ բոլոր դեպքերում դրանք ուղեկցվել են որոշակի գիտական հիմնավորումներով: Ընդ որում, այդ եզրահանգումներն ունեն որոշակի գիտագործնական նշանակություն, դրանք կարող են հիմք հանդիսանալ ինչպես անհրաժեշտ հետազոտությունների, այնպես էլ՝ ներպետական օրենսդրության կատարելագործման համար:

Ատենախոսությունը մեծամասամբ նկարագրական բնույթի չէ, այն հիմնականում առանձնանում է, որպես վերլուծական գիտական աշխատություն: Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացված եզրահանգումները բնորոշվում են ինքնատիպությամբ,

ընդհանուր առմամբ հեղինակը դրսևորել է թեմային առնչվող սուր հարցադրումները համակողմանի քննարկման առարկա դարձնելու և դրանց առնչությամբ ինքնուրույն եզրակացություններ անելու ունակություն:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութ, ինչպես նաև դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, այդ թվում՝ դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես՝ առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Ատենախոսության հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են ինչպես վերջինիս կողմից հրատարակված մենագրությունում և սեղմնագրում, այնպես էլ տարբեր գիտական հանդեսներում տպագրված թվով 7 հոդվածներում: Ընդ որում, նշված գիտական հանդեսները սահմանված կարգով թույլատրված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից:

Ատենախոսության արժանիքներից է նաև նյութի շարադրանքի որակը, մասնավորապես հեղինակին հաջողվել է ապահովել շարադրանքի անհրաժեշտ հստակություն, զերծ մնալ խրթին ու բազմանշանակ մտքերից, օտարածին տերմիններից և դրսևորել ինքնատիպ ոճ:

Միաժամանակ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ ստորև ներկայացնում ենք մեր նկատառումները.

1. Ընդհանուր առմամբ, գիտական անհրաժեշտ խորությամբ են բացահայտված «մեղք» և «պատիժ» հասկացությունների պատմահրավական փուլերը, ինչպես նաև վերջինների համատեքստում խնդրո քննարկման առարկա սկզբունքների ձևավորման հիմքերը: Միաժամանակ, տվյալ հարցի հետազոտությունը, թերևս, առավել ամբողջական ու համալիր կլիներ, եթե այն իրականացվեր կոնկրետ

ժամանակագրության շեշտադրմամբ և այդ փուլերի տևողության հստակեցմամբ և հիմնավորմամբ:

2. Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում առաջարկվել է իրավաբանական տեսական գրականության մեջ տալ «մեղք» հասկացության այլ՝ ավելի լայն սահմանում, սակայն աշխատանքը ավելի կշահեր, եթե առավել մանրամասն մատնանշվեր դրա անհրաժեշտությունը կամ նպատակը:

3. Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում առաջ է քաշվել «երկրում սահմանադրականության խորացման հրամայական» եզրույթը, որի կապակցությամբ, կարծում ենք աշխատանքը գիտական առումով առավել կշահեր, եթե առվել համընդգրկուն բացահայտվեր նշված եզրույթի էությունը և ուղիղ կապը՝ քննարկվող սկզբունքների սահմանադրականացման հետ:

4. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում հեղինակի կողմից նշվել է, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքները պետք է հանդիսանան մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանման և կենսագործման համար իրական և լիարժեք սահմանադրական երաշխիք և օրենսդրորեն պատշաճ արտացոլվելու, օրենսդրության մշակման ու կատարելագործման, ինչպես նաև իրավական համակարգերում առկա այս կամ այն խնդրի լուծման հրամայականով պայմանավորված՝ կարող են հանգեցնել նոր օրենսդրական կառուցակարգերի ձևավորմանը, սակայն, միևնույն ժամանակ կարծում ենք, որ զգալիորեն կմեծանար աշխատանքի գործնական նշանակությունը, եթե հեղինակը առավել հստակ բացահայտեր իրավունքի այս կամ այն ոլորտում անհրաժեշտ կոնկրետ օրենսդրական փոփոխությունները:

5. Թեև հեղինակի կողմից նպատակ է դրվել ամփոփել հայրենական ու արտասահմանյան փորձը, այնուամենայնիվ կարծում ենք, որ ճիշտ կլիներ, որ ատենախոսի կողմից կատարված համեմատական վերլուծության արդյունքում ներկայացվեր առաջարկներ միջազգային փորձից, որոնք կարող են ներդրվել հայրենական իրավական համակարգում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ մեր նկատառումները, անհրաժեշտ է նկատել, որ դրանք առնչվում են հիմնականում գիտական բանավեճի

շրջանակներին կամ ունեն խմբագրական թերություններն ընդգծելու բնույթ և չեն նսեմացնում հետազոտության արժեքը:

Այսպիսով, հաշվի առնելով ատենախոսության վերաբերյալ հիշյալ նկատառումները, հարկ ենք համարում նշել, որ *Վիրաբ Ալբերտի Վարդանյանի՝ «Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում»* վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը, արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» - (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝

Ի.Վ.Սարգսյան

04 հոկտեմբերի 2021 թ.

Իրավաբանական գիտությունների թեկնածու ***Ի.Վ.Սարգսյանի*** *ստորագրությունը*

հաստատում եմ՝